

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԳԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1883 ԱՄԻՆ

ՆԻՍՏԻՆ

2 ԱՊՐԻԼ 1884



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԵՆԱՆ

1887

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄՆ 1883 ԱՄԻ

ՆԻՍՏ ԻԵ.

2 ԱՊՐԻԼ 1884

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Սիմէօն Եպիսկ. Սէֆէրեան (Առժամայ)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Քրիստոստուր Էֆէնոյի Ղազարոսեան

ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Խնդիր ընտրութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց. — (Գուէարկութիւն.)
Բ. — Ծրագիր Յիշատակագրի.

Նախնական գումարում ի սրահի Ազգային
Պատրիարքարանի

ԴՌՆՓԱԿ

Ընդ առժամայ Նախագահութեամբ
Գեր. Տ. Սիմէօն Եպիսկոպոսի Սէֆէրեան, Ա-
տենապետ Ղազարոսեան Քրիստոստուր Է-
ֆէնոյի ատենան կը բանայ ժամը 4 1/2 ին ի
ներկայութեան 95 Երեսօրհանաց որոց թիւն
ի վերջոյ 101 ի կը յանգի:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1

Դիտողութիւն Ղազարոսեան Քրիստոստուր
Էֆէնոյի վասն Ատենապետութեան իւրոյ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Իջնելով Ատենապե-
տի Արտէն) Երեսօրհան Տեարք. վերջի նըս-

տի յետաձգմանն առթիւ խնայայ թէ Երես-
օրհանաց կողմանէ ինձ դէմ բողոքագիր մը
ներկայացրէ Է ժողովոյդ, իրրեւ միակ պատ-
ճառ նոյն յետաձգման: Արդ նոյն բողոքա-
գիրն իրրեւ ամբաստանութիւն մը նկատելով
իմ անձիս դէմ, կուզեմ առ այս տեղեկու-
թիւն տալ ժողովոյդ, եւ ապա, եթէ հարկ
դատէք, անցնիլ Ատենապետի աթոռն:

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԷՏ. — (Ատենապետ Քաղ-
ժողովոյ) Անցեալ նստի յետաձգման պարա-
գայից մասին Ձեր վարչութեան Դիւանն ար-
դէն բանակցած է որոց հետ որ անկէ եւ կը
խնդրէ, որ այսօր, առանց այդ խնդիրն վերս-
տին յուզելու, Ղազարոսեան Էֆէնոյին անց-
նի իւր Ատենապետի աթոռը:

ԹՈՐՈՍԵԱՆ Տ. ԷՖ. — Քաղաքական Ժո-
ղովոյ վսեմ. Ատենապետ Պէյն կը յայտնէ

Թէ վարչութեան Դիւանն բանակցեր է որոց հետ որ անկէ։ Սակայն կը փափաքեմք որ վարչութիւնն այդ մասին բարեհաճի աւելի որոշ տեղեկութիւն մը տալ մեզ այսօր իսկ։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Այսօր հոս հրաւիրուած եմք միմիայն կաթողիկոսական ընտրութեան մասին քուէարկութիւն կատարելու համար։ Ուստի եւ չեմք կարող դրադել այդ տեսակ խնդիրներով, մանաւանդ թէ Գաղ. Ժողովոյ վսեմ. Ատենապետն ալ առայս համամիտ է ինձ։ Բայց Ժողովս կրնայ, յետ իւր օրակարգի, դրադել նաեւ այդ քննութեան խնդրովն։

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Այդ յետաձգման խնդրոյն առթիւ անցեալ օր իմ անունն եւս յիշատակուեր է։ Ուրեմն, եթէ կը հաճիք, ես ալ պատրաստ եմ իմ մասին հարկ եղած բացատրութիւններն տալ այսօր իսկ։

ԹԻԻԼՊԵՆՏՃԵԱՆ Ն. ԷՖ. — Ինչպէս դիտել տուաւ Պատ. պաշտօնակցիս, Մամիկոնեան էֆէնտի, այսօր յարտաստիւր նիստ հրաւիրեալ եմք միմիայն կաթողիկոսական խնդրոյն համար եւ չեմք կրնար դրադիլ տարբեր խնդրովք։ Չեմ ըսեր թէ քննութեան խնդիրն կարեւորութենէ զուրկ է եւ պէտք չէ նկատողութեան առնուլ, բայց քանի որ այս նիստն 83ի շրջանի վերջինն չէ, կրնամք այդ խնդրոյն քննութիւնն թողուլ յաջորդ նստին։

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, յետաձգուի։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք, Երեսփոխան Տեառք, թէ խնդրոյ առարկայն գլխաւորաբար իմ անձն է։ Եւ իրաւամբ պահանջեցի յետ այս քննութեան անցնիլ ի Դիւան։ Բայց քանի որ Երեսփոխանք մեծամասնութեամբ եւ ձայնակցութեամբ Գաղ. Ժողովոյ վսեմ. Ատենապետի կ'առաջարկեն

խնդրոյն քննութիւնն յաջորդ նստին թողուլ, ուստի պարտ է ինձ առ այս դիմել Ձեր քուէին։

Քուէարկութիւն կատարուելով, Ժողովն 2 քուէի դէմ միաձայնութեամբ ԿՈՐՈՇԷ տասն Երեսփոխանաց կողմանէ ընդդէմ Ժողովոյ Ատենապետին տրուած բողոքագրին նկատառում թողուլ յառաջիկային։

Հետեւաբար Ղազարոսեան Քրիստոսոսուր էֆէնտի վերստին կանցնի ի Դիւան եւ ձեռք կառնու օրակարգն։

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

Խնդիր կաթողիկոսական բնորոշեան — (Բաւարկութիւն.)

1

Բանաձեւ առաջարկեալ ի Կաթողիկոսական Յանձնաժողովէ առ Ազգային Ժողով.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կաթողիկոսական Յանձնաժողովոյ կողմանէ նոր բանաձեւ մը կայ Դիւանիս վրայ ստորագրել անդամոց մեծամասնութեան կողմանէ։

Կը հրաւիրեմ Ատենապետի էֆէնտի ընթերցուլ նախ այդ բանաձեւն։

«Ազգային Երեսփոխանական Ժողովն Հայոց Տաճկահայաստանեայց ի միջոց քուէարկելոյ նախապէս ի Համագումար Եկեղեցական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ, յանուն առաջնորդական վիճակացն եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ, կ'ընտրէ

միակ քուէարկութեամբ երեք ընտրելի Եպիսկոպոս ի Կաթողիկոսութիւն Ամենայն Հայոց։

«Այս եղանակաւ պատրաստեալ եւ առնուն ցանկն կը դասակարգուի ըստ թուոյ քուէից, եւ առաջի անունն իւրաքանչիւր ընտրելոյն կը նշանակուի թիւ քուէիցն զոր ստացաւ։

«Եկեղեցին Հայոց որ ի Տաճկաստան, ըստ որում կազմէ զմեծամասնութիւն Ազգին Հայոց, պահանջած է եւ կը պահանջէ իրաւամբ որ իւր եւ առնուն ցանկն ամբողջապէս եւ նշանակութեամբ քուէից ընտրելեացն, մոռնէ ի քուէտուին քուէարկութեան որ կը կատարուի ի Կաթողիկէ Տաճարին Սրբոյ Էջմիածնի։

«Այն Ընտրելին՝ որոյ յԱզգային Ժողովն ստացած քուէին վրայ բարդուելով Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոցն քուէայքն՝ կ'առանջադնէ մեծամասնութիւն քուէից, նա է ընտրեալ Հայրապետն եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց։

«Պատրիարքն Կ. Պոլսոյ պատրաստեալ զեւանուն ցանկ ընտրելեաց հաղորդէ առ Տեղապահն Արարատեան Մայր Աթոռոյ ի ձեռն առանձին պատուիրակի, տալով նմա պաշտօն ներկայ գտանիլ եւ ընտրական գործողութեանց՝ վերոյնշանակեալ պայմանաց մէջ, մասնակցիլ յանուն Հայոց Տաճկաստանի։»

Տեղեկարեր

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐ-ՊԵՅ

Յ. ԲԷՅ. ՄԿՐԵԱՆ

Յ. ՆՈՒՐԵԱՆ

Կ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

2 Ապրիլ 1884

(Յեա բնիկացման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսելէ յետոյ զայս նոր բանաձեւ, որով փոխանակ 1866ի ընկալեալ եղանակին, տարբեր եղանակ մը կ'առաջարկուի Կաթողիկոսական ընտրութեան մասին, կը հրաւիրեմ զՏ. Սրբէն Նար-Պէյ Սրբազան խօսք առնուլ իրրեւ տեղեկարեր։

Տ. Խ. ԱՐՔ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ. — (Տեղեկարեր) Ձեր պատուարեր քուէով ընտրեալ Կաթողիկոսական Յանձնաժողովն, Տեառք, պատիւ ըրած է ինձ կարգելով զիս իւր կողմանէ Տեղեկարեր առաջի Պատկ. Ժողովոյ վսեմ պաշտպանութեան այն նոր բանաձեւին որոյ ընդունելութիւնն կուգայ առաջարկել Ձեզ այսօր.....

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Միթէ Յանձնաժողովն իւր ամբողջութեամբն համամիտ է այդ նոր բանաձեւին։

Տ. Խ. ԱՐՔ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ. — Ո՛չ իւր ամբողջութեամբն, այլ մեծամասնութեամբն։

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Լաւ։

Տ. Խ. ԱՐՔ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ. — (Շարունակելով) Արդարեւ, Տեառք, Պատկ. Ժողովք իւր վերջնութեւր նստի մէջ որոշեց այս անգամ եւս մասնակցիլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան համաձայն 1866ի ընտրական եղանակին։ Սակայն Ձեր Յանձնաժողովոյ մեծամասնութիւնն նկատելով որ այդ 1866ի ընտրական եղանակն՝ պատմութեան, արդարութեան եւ Սահմանադրութեան չի համաձայնիր այնքան...

(Դժգոհութեան ցոյցեր)

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — (Ընդմիջելով զԱտենապետին) Բայց պէտք է յիշել, Սրբազան,

Թէ մինչեւ վերջն ի նպատ 1866 ի եղանակին կը խօսէիք

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի ձայն գանգակի) Խնդրեմ, թոյլ տուէք Ատենապետ Սրբազանի շարունակել իւր խօսքն, եւ ապա կրնաք խօսք առնուլ եւ հերքել իւր կարծիքներն: Շարունակեցէ՛ք, Սրբազան:

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍԿ. ՆԱՐՊԵՑ. — (Շարունակելով) Կըսէի թէ Յանձնաժողովոյ մեծամասնութիւնն նկատելով 1866 ի ընտրական եղանակին՝ պատմութեան, արդարութեան եւ Սահմանադրութեան բոլորովին համաձայն չգտնուիլն, արժան դատած է առաջարկել Ազգային ժողովոյդ, որ այս անգամ, իւր կողմանէ ընտրեալ երեք Կաթողիկոսական ընտրելեաց անուանքն իրենց քուէից առաւելութեան կարգաւ առանձին պատուիրակի մը միջոցաւ հաղորդուին ի Ս. Էջմիածին ի ձեռն Ս. Պատրիարքին Կ. Պօլսոյ

ՁԱՅՆԵՐ. — (Ընդմիջելով) Յանձնաժողովն ըսել կուզէ թէ այս Ազգ. ժողովն պարզապէս ցանկ պատրաստող ժողով մը նշկատուի:

(Վերստին աղմուկ)

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍԿ. ՆԱՐՊԵՑ. — (Շարունակելով) Եւ այդ եռանուն ցանկն ամբողջապէս մտնէ ի քուէտուփն քուէարկութեան ար տեղի պիտի ունենայ Կաթողիկէ Տաճարին մէջ: Եւ այն ընտրելին որոյ ստացում քուէից վրայ բարդուելով, Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց քուէայքն, Կ'ստանայ առաւելագոյն քուէ, նա հռչակուի Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ձեր Յանձնաժողովն համոզուած է թէ Պատկ. ժողովդ սոյն նոր բանաձեւի ընդունելութեամբ թէ՛ Սահմանադրութեան եւ թէ՛

իւր արդար իրաւանց համաձայն շարժած պիտի լինի

(Ձանգումն նստարաններէ անամբերութեան ցոյցեր)

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Կը ցաւիմ արդարեւ որ մեր Կաթողիկոսական Յանձնաժողովն այժմ դէմ կ'ենէ 1866 ի ընտրական եղանակին, եւ կը ջանայ պատմութեան, իրաւանց եւ Սահմանադրութեան անհամաձայն հռչակել զայն, մինչդեռ երկիցս ըստ այնմ մասնակցած է Ազգային ժողովն, եւ ներկային համար նոյն եղանակին դործադրութիւնն որոշած է, մանաւանդ թէ ներկայ Կաթողիկոսական Յանձնաժողովն ալ մինչեւ մօտ օրերս զնոյն պահպանած եւ պաշտպանած է:

Ես կը ցաւիմ որ Յանձնաժողովն իւր այս նոր առաջարկութեամբ Ազգային ժողովն ընտրելեաց ցանկ տուող մարմին մը կը դարձնէ, ինչպէս դիտել տրուեցաւ պահ մ'առաջ:

Հետեւաբար կառավարեմ չընդունիլ բնաւ Յանձնաժողովոյն այս նոր առաջարկութիւնը եւ վարուիլ ըստ 1866 ի ընկալեալ եղանակին, եւ կամ իրրեւ ընտրող ժողով՝ ուղղակի մասնակցիլ ընտրութեան, մէկ անձի համար միայն քուէ տալով . . .

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Դեր-Ատենապետ Կար. Յանձնաժողովոյ) Կը տեսնեմ թէ Պէրպէրեան էֆէնտին բոլորովին կը խեղաթիւրէ Յանձնաժողովոյ կողմանէ ներկայացեալ բանաձեւն: Ուստի ես կը պահանջեմ որ նախ այդ բանաձեւն ձեռքի որպէս զի տարբեր մեկնութեանց տեղի չի մնայ:

(Աղմուկ եւ բնդվիջումներ)

ԱՐՇԱԿ Յ. ԷՖ. — Ընտրութեան պիտի ձեռնարկուի մէկ քանի վայրկեանէն եւ տակաւին ընտրութեան ձեւին վրայ կը վիճաբանինք:

ՁԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ըստ որում դիտել կը տրուի թէ ժամանակն սուղ է, ուստի չեմ ուզեր եւ ես խնդրոյն վրայ իմ տեսութիւններս պարզել: Միայն թէ, լսելէ յետոյ Կաթողիկոսական Յանձնաժողովոյ կողմանէ ներկայացեալ սոյն նոր բանաձեւն, ես եւս կը յարիմ անոր, ըստ որում արդարութեան համաձայն կը գտնեմ զայն եւ որոյ դործադրութեամբ կը յուսամ թէ մեր Ռուսահայ եղբարց եւս անիրաւութիւն մը ըրած չեմք ըլլար:

ԹԻՒԼՊԵՏՅԱՆ Ն. ԷՖ. — Տեսաք Երեսօրիսանք. բացառանջութիւն չի պիտի ընեմ, ուստի կը խնդրեմ որ հանդարտ ոգով ունկնդրէք զիս, մանաւանդ այնպիսի պահումը յորում Ազգային ժողովն իւր Ազգային եւ Եկեղեցական ամենանուիրական մէկ խնդրոյն վրայ որոշում պիտի տայ . . .

(Սոյն պահուն Երեսօրիսանք հետզհետէ դուրս ելնելով ժողովարանէն, Ատենապետ էֆէնտի տասն վայրկեան դադարի համար կը փակէ Ատենան:

(Դադարէն յետոյ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենան վերստին բացուած է Տեսաք, եւ խօսքն Կաթողիկոսական Յանձնաժողովոյ փոքրամասնութեան անդամներէն Տ. Մատթէոս Իզմիրեան Սըրբազանինն է:

(Այն ինչ Տ. Մատթէոս Սրբազան կը պատրաստուի խօսք առնուլ ընդդէմ Կաթողիկոսական Յանձնաժողովոյ մեծամասնութեան առաջարկին, եւ ահա Քաղաքական ժողովոյ Ատենապետ Վսեմ. Մաքսուտ Սիմօն Պէյ կը ծանուցանէ Դիւանին թէ՛ հազարաւոր ժողովուրդ խռնուած Պատրիարքարանին շուրջն, անհանդարտութեան ցոյցեր կ'ընէ եւ թէ հարկ անհրաժեշտ է իջնել ի Մայր-Ե-

կեղեցի եւ նիստն շարունակել ի դռնաց:)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղաքական ժողովոյ Ատենապետ Պէյն կը ծանուցանէ Դիւանին թէ հազարաւոր ժողովուրդ չըմապատած է Պատրիարքարանն եւ կրնայ ըլլալ որ, չէնքն՝ արդէն խարխուլ վտանգ մը յառաջ բերէ: Եւ ըստ որում Կաթողիկոսական Յանձնաժողովոյ մեծամասնութեան կողմանէ ներկայացեալ նոր առաջարկին վրայ դեր ու դէմ խօսուեցան եւ կարծիքներն փոքր ի շատէ լուսարանուեցան, ուստի կառավարեմ վիճարանութեան փակումն այժմ իսկ քուէի դնել եւ իջնել Մայր Եկեղեցի քուէարկութեան ձեռնարկելու համար:

ՁԱՅՆԵՐ. — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ:

(Սոյն պահուն Ս. Փափաղեան էֆէնտի յայտնելով թէ նոյն իսկ Կաթ. Յանձնաժողովոյ մեծամասնութեան կողմանէ ներկայացեալ բանաձեւին դէմ խօսք ունի, կը կարդայ իւր մէկ առաջարկն: Սակայն Երեսօրիսանք «քուէ, քուէ» աղաղակին վրայ Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ վիճարանութեան փակումը որ ԿՆՌՈՒՆՈՒԻ 2 քուէի դէմ միաձայնութեամբ:)

Ապա Երեսօրիսանք առաջնորդութեամբ Մայր-Դիւանին կ'իջնեն ի Մայր-Եկեղեցի ուր խռնուած էր արդէն հազարաւոր ունկնդիր ժողովուրդ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենան վերստին բացուած է Տեսաք: Սակայն ո եւ է դործութեան ձեռնարկելէ յառաջ, ըստ աւանդական սովորութեան, կը հրաւիրեմ Եկեղեցական Ս. Հայրերն կարգաւ աւուր պատշաճի շարականն:

Ատենապետ էֆէնտի սոյն հրաւերին վրայ, Եկեղեցական Ս. Հայրք կերգեն «Առնող Աստուածուրբան» Շարականն որում կ'ուն-

կընդրէ երեսփոխանութիւն եւ ժողովուրդ գլխաւորաց եւ խորին երկիւղածութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէարկութեան ձեռնարկէ յառաջ, Տեարք, պէտք է նախ քուէի դնել կաթողիկոսական Յանձնաժողովոյ մեծամասնութեան կողմանէ ներկայացեալ նոր բանաձեւն, առանց խօսք տալու ո եւ է երեսփոխանի, ըստ որում վիճարանութիւնն փակեալ է:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Կաթողիկոսական Յանձնաժողովոյ առաջարկութեան վրայ՝ իւրեւ բարեփոխում՝ կ'առաջարկեմ որ իւրաքանչիւր երեսփոխան միայն մէկ եկեղեցականի համար քուէ տայ, բայց առաւելագոյն քուէ ստացողներէն երեք անուանք էջմիածին հաղորդուին:

Չայս ասելով Թորոսեան Յովհաննէս էջմիածին Դիւանին կը յանձնէ իւր սոյն բարեփոխման առաջարկ:

«Կ'ընդունիմ կաթողիկոսական Յանձնաժողովոյ բանաձեւն, պայմանաւ որ իւրաքանչիւր երեսփոխան միայն մէկ եկեղեցականի համար քուէ տայ, բայց առաւելագոյն քուէ ստացողներէն երեք անուանք էջմիածին հաղորդուին:»

Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

Ապա Պէրպէրեան Ռէթէոս էջմիածին իւր հետեւեալ բարեփոխումն կը ներկայէ Դիւանին:

«Կ'առաջարկեմ որ Թուրքիոյ Ազգ. ժողովն ուղղակի մասնակցի Հայրապետի ընտրութեան ի Պօլիս, Մայր եկեղեցւոյ, անձնիւր երեսփոխան քուէ տալով մի միակ Եպիսկոպոսի, եւ երեք առաւելագոյն քուէ ստացողաց անուններն, ա-

ռած քուէինն բարեփոխելով, ըստ համեմատութեան 65 վիճակացն Թուրքիոյ այն է 130 թուոյ համեմատութեամբ, հաղորդուին ի Ս. էջմիածին միանալու համար անդ կատարուած քուէարկութեան արդեանց հետ, եւ միացեալ քուէից առաւելագոյն մասն ընդունողն հռչակուի կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ օրինի նախ քուէի պիտի դնեմ Թորոսեան եւ Պէրպէրեան էջմիածինի կողմանէ ներկայացեալ սոյն երկու բարեփոխումներն:

Չայս ասելով Ատենապետ էջմիածին յաջորդաբար քուէի կը դնէ սոյն երկու բարեփոխումներն, որոց առաջինն կ'ստանայ 8 քուէ եւ երկրորդն 10 քուէ:

(Սոյն պահուն Փափազեան Ս. էջմիածին խօսք առնելով ի բեմ կ'ընէ, սակայն երեսփոխանաց մէկ մասին կողմանէ յարուցեալ ազադակաց առջեւ կը պարտաւորի թողուլ բեմն, խնդրելով Դիւանին որ հաճի արձանագրել տալ իւր խօսքը ազատութեան դէմ տեղի ունեցած սոյն ձեռնման պարագայն.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ, Տեարք, Ձեր քուէին պիտի ենթարկեմ կաթողիկոսական Յանձնաժողովոյ մեծամասնութեան կողմանէ ներկայացեալ 1866ի ընտրական եղանակի բարեփոխեալ առաջարկն:

Քուէարկութիւնն անուանական կոչմամբ տեղի պիտի ունենայ բանաձեւն ընդունողք պիտի պատասխանեն Այո, իսկ չընդունողք Ոչ, եւ ձեռնարկք պիտի յայտնեն իրենց ձեռնդակ մնալն:

Չայս յայտարարելէ յետոյ, Ատենապետ էջմիածին քուէի կ'ենթարկէ կաթ. Յանձնա-

ժողովոյ մեծամասնութեան կողմանէ ներկայացեալ նոր առաջարկն որ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ 30 Ո՛ՒՐ ԴԷՄ 62 Այոով:—8 երեսփոխանք ձեռնպահ կը մնան:

ԲԱՆԱԾԱՆԵՆ ԻՆՊՈՒՆՈՂԻ

1. Տ. Սիմէօն Եպիս. Սէֆէրեան, 2. Խորէն Արք-Եպիս. Նարպէյ, 3. Տ. Յովհաննէս Քէշյ. Մկրեան, 4. Տ. Գրիգոր Քէշյ. Աճէմեան, 5. Տ. Եղիշէ Վրդ. Այվազեան, 6. Տ. Սահակ Քէշյ. Սարգսեան, 7. Տ. Յովսէփ Վարդ. Այվազեան, 8. Տ. Գարեգին Վարդ. Թաթարեան, 9. Տ. Գարրիէլ Քէշյ. Խանճեան, 10. Գ. էֆ. Պէրպէրեան, 11. Կ. էֆ. Ազարամեան, 12. Բ. էֆ. Քիւրքճիպաշեան, 13. Գ. էֆ. Ապտուլլահ, 14. Տ. էֆ. Հիւնքեարպէյէնեան, 15. Ն. էֆ. Այվազեան, 16. Խ. էֆ. Կամաւրաւեան, 17. Մ. էֆ. Ինճէեան, 18. Մ. էֆ. Էքսէրճեան, 19. Մ. էֆ. Պէշիրեան, 20. Բ. էֆ. Հալաճեան, 21. Յ. էֆ. Քէրէստէճեան, 22. Մ. էֆ. Պարոնիկեան, 23. Մ. էֆ. Ֆրէնկեան, 24. Պ. էֆ. Էքսէրճեան, 25. Գ. էֆ. Գասպարեան, 26. Յ. էֆ. Հաճեան, 27. Գ. էֆ. Չերազ, 28. Գ. էֆ. Սէլիմիէճեան, 29. Ղ. էֆ. Հովուեան, 30. Ն. էֆ. Պոյաճեան, 31. Վ. էֆ. Օրմանեան, 32. Հ. էֆ. Մաղպուլեան, 33. Տ. էֆ. Կիւմիւշկէրտեան, 34. Տ. էֆ. Եուսուֆեան, 35. Մ. էֆ. Գաղանճեան, 36. Մ. էֆ. Ճանրմեան, 37. Պ. էֆ. Շիշմանեան, 38. Ս. Պէյ Մաքսուտ, 39. Գ. էֆ. Յովակիմեան, 40. Կ. էֆ. Հաղարեան, 41. Մ. էֆ. Տէօքմէճեան, 42. Կ. էֆ. Սըվաճեան, 43. Մ. էֆ. Կիւմիւշեան, 44. Մ. էֆ. Չերազ, 45. Ն. էֆ. Երէջեան, 46. Յ. էֆ. Արշակ, 47. Յ.

էֆ. Նուրեան, 48. Գ. էֆ. Պաղտատեան, 49. Գ. էֆ. Ղաղարտեան, 50. Յ. էֆ. Արշակունի, 51. Ռ. էֆ. Պուլկուրեան, 52. Մ. էֆ. Գուլաքարեան, 53. Ս. Ազնաւորեան, 54. Կ. էֆ. Իւթիւճեան, 55. Կ. էֆ. Խաչիկեան, 56. Յ. էֆ. Ազնաւորեան, 57. Տ. էֆ. Սիւնանեան, 58. Մ. էֆ. Գօլօլեան, 59. Կ. էֆ. Սէթեան, 60. Մ. էֆ. Չօպանեան, 61. Մ. էֆ. Աղաբէգեան, 62. Յ. էֆ. Պապօեան:

ԲԱՆԱԾԱՆԵՆ ԻՆՊՈՒՆՈՂԻ

1. Տ. Մատթէոս Եպիս. Իլմիրլեան, 2. Տ. Կարապետ Վարդ. Բազրատունի, 3. Տ. Վահան Վարդ. Տ. Մինասեան, 4. Տ. Կարապետ Քէշյ Սէթեան, 5. Տ. Խորէն Քէշյ Փէշիվանեան, 6. Տ. Ոսկի Քէշյ Օհանեան, 7. Տ. Յովհաննէս Վարդ. Արշարունի, 8. Յ. էֆ. Թիւրեաթեան, 9. Յ. էֆ. Եւմէնիճեան, 10. Յ. էֆ. Գուրգէն, 11. Յ. էֆ. Անդրէասեան, 12. Պ. էֆ. Թորգոմեան, 13. Տ. էֆ. Փափազեան, 14. Յ. էֆ. Պէկեան, 15. Մ. էֆ. Մէղպուրեան, 16. Ռ. էֆ. Թաթէոսեան, 17. Կ. էֆ. Փանոսեան, 18. Ն. էֆ. Թիւլպէնտեան, 19. Ա. էֆ. Թընկերեան, 20. Յ. էֆ. Պարոնեան, 21. Կ. էֆ. Երէջեան, 22. Գ. էֆ. Ղաղարտեան, 23. Յ. էֆ. Իւթիւճեան, 24. Ռ. էֆ. Պէրպէրեան, 25. Ս. էֆ. Փափազեան, 26. Յ. էֆ. Չէրքէզեան, 27. Մ. էֆ. Մէլիքեան, 28. Մ. էֆ. Ալիքսանեան, 29. Գ. էֆ. Վարդանեան, 30. Մ. էֆ. Մամիկոնեան:

ՁԻՆԱԿԱՆԻ

1. Տ. Յակոբ Վարդ. Բ. Փափազեան, 2. Յ. է. Պօշակեան, 3. Ս. էֆ.

Ֆելէքեան, 4. Գ. Էֆ. Նորատունկեան, 5. Յ. Էֆ. Թորոսեան, 6. Յ. Էֆ. Գորեան, 7. Հ. Էֆ. Ալաճաճեան, 8. Ն. Էֆ. Գարագաշեան:

(Յետ Բաւարկութեան)

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անուանական քուէ-արկութեան արդիւնքն կը յայտնէ, Տեարք, թէ Ազգային Ժողովն 62 քուէով, ընդդէմ 30 քուէից, ԿՈՐՈՇԷ մասնակցիլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, համաձայն Կաթողիկոսական Յանձնաժողովոյ մեծամասնութեան կողմանէ ներկայացեալ հետեւեալ առաջարկութեան:

«Ազգային Երեսփոխանական Ժողովն Հայոց Տաճկահայաստանեայց ի միջոյ ցանկի քուէարկելոյ նախապէս ի Համագումար Եկեղեցական Ժողովոյ Հայոց Թուրքիոյ, յանուն առաջնորդական վիճակացն եղելոց ընդ իրաւասութեամբ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ, կ'ընտրէ միակ քուէարկութեամբ երեք ընտրելի Եպիսկոպոս ի Կաթողիկոսութիւն Ամենայն Հայոց:

«Այս եղանակաւ պատրաստեալ եւ առանձն ցանկն կը դասակարգուի ըստ թուոյ քուէից, և առաջի անուան իւրաքանչիւր ընտրելոյն կը նշանակուի թիւ քուէիցն զոր ստացաւ:

«Եկեղեցին Հայոց որ ի Տաճկաստան, ըստ որում կազմէ զմեծամասնութիւն Ազգին Հայոց, պահանջած է և կը պահանջէ իրաւամբ որ իւր եռանուն ցանկն ամբողջապէս և նշանակութեամբ քուէից ընտրելեացն, մոանէ ի քուէտուին քուէարկութեան որ կը կատարուի ի Կաթողիկէ Տաճարին Սրբոյ Էջմիածնի:

«Այն ընտրելին՝ որոյ յԱզգային Ժողովէն ստացած քուէին վրայ բարդուելով Ռուսաստանի, Պարսկաստանի եւ

Հնդկաստանի Հայոցն քուէայքն՝ կ'ըստանայ զմեծամասնութիւն քուէից, Նա է ընտրեալ Հայրապետն և Կաթողիկոս Ամենայն Հայոց:

«Պատրիարքն Կ. Պոլսոյ պատրաստեալ զեռանուն ցանկ ընտրելեաց հաղորդէ առ Տեղապահն Արարատեան Մայր-Աթոռոյ ի ձեռն առանձին պատուիրակի, տալով նմա պաշտօն ներկայ դրանիլ և ընտրական գործողութեանց՝ վերոնշանակեալ պայմանաց մէջ, մասնակցիլ յանուն Հայոց Տաճկաստանի:»

2

Հանրագիր Վանեցի Ազգայնոց վասն Կաթողիկոսական ընտրելիութեան Ամեն. Տ. Մկրտիչ Արք-Եպիսկոպոսի Խրիմեան:

ԱՅԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վանեցի ազգայնոց կողմանէ 7,500 ստորագրութեամբ հանրագիր մը յանձնուած է Դիւանիս, որով կը խնդրեն Կաթողիկոսական երեք ընտրելեաց ցանկին մէջ Ամեն. Տ. Խրիմեան Սրբազանի անունն եւս նշանակել:

Ուստի քուէարկութեան ձեռնարկելէ յառաջ, Դիւանիս պարտքն է ժողովոյդ ներկայել սոյն հանրագիրն, որ ըստ օրինի վաւերացեալ եւ տուածագրեալ է Պատրիարքարանի Դիւանատունէն:

Ատենապետ Էֆէնտիի հրաւիրանք երեսփոխան Սրչակունի Յովհաննէս Էֆէնտի բեմէ ելնելով բարձրաձայն կ'ընթեռնու հանրագիրն:

Տէր Ատենապետ

Ազգային Երեսփոխանական Պատկ. Ժողովոյ,

Նկատելով որ, այսօր Պատկ. Երեսփոխանական Ժողովդ մեծ և ամենակարեւոր կոչման մը ենթակայ կը գտնուի՝

երբեակ թուով ցանկ մը պատրաստել յ'ընտրութիւն Կաթողիկոսի Արարատեան Մայր-Աթոռոյ:

Նկատելով որ, արդարեւ արժանաւոր Կաթողիկոսի ընտրութիւնն Ազգային իրաւանց զօրութեամբ ոչ միայն սրբազան պարտաւորութիւն է այլ և հաւատարմանարի երաշխաւորութիւն մը, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրինաց և իրաւանց անվթար պահպանութեամբ, զի ինքն Կաթողիկոսինն է և իւրն է Կաթողիկոս:

Նկատելով որ Խրիմեան Ամեն. Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսն եւս օժտեալ է Կաթողիկոսական արժանավայել ձիրքերով, վասնզի՝

Խրիմեանի Ժողովրդականութիւնն անուրանալի է իւր Անապատական բարբառոյ ձայնին մէջ. զի՝ Խրիմեանի քրիստոնավայել մարդասիրութիւնն՝ ինչպէս ի բազում տեղիս, նոյնպէս և ի Հայաստան ի ժամանակս սովու՝ առանց բնական ազգի խտրութեան չնաչխարհիկ անձնուիրութեամբ հռչակ ետ ի համօրէն աշխարհս:

Խրիմեանի եկեղեցականութիւնն անստուեր կը փայլի իւր նախանձելի գործոցը մէջ, որ բեմական ճարտարախօս վարդապետութեան հետ լծորդելով իւր Աստուածախօս դրին՝ արի զինուորին նման չէ դադրած Եկեղեցւոյ օրինաց և իրաւանց անվթար պահպանութեանը հսկել:

Խրիմեանի գրականութիւնը Հայաստանի մթապատ խորշերուն մէջ ուսուցման և տպագրական արեւով նոր լոյս, և նոր յոյս սիրեց, և խոսքն վայրերն քրտամբ մշակելով, դաստիարակեալ սրբտեր, և ուսեալ մտքեր պատրաստեց և դասացեալ ծառերէ քաղաքակրթեալ

Ժողովուրդ ընձիւղելով՝ ընծայեց Տէրութեան և Ազգին:

Վերջապէս Խրիմեանի Պատրիարքութիւնն և պատուիրակութիւնը՝ որոց միշտ հաւատարիմ մնաց, հաւաստիք են իւր բարձր ձրից որ իրաւամբ արժանի կը հանդիսացնեն զինքն Կաթողիկոսական բարձր գահուն:

Ի վերայ այսր ամենայնի նկատելով որ Երեսփոխանութիւնը Ժողովրդական ձայնից հաւաքական ամփոփումն է, որ սրբագոյն կոչումն ունի ներկայել նոյն իսկ Ժողովրդեան կամքն ու ձայն, եւ զանի պաշտպանել իւր իրաւանց սահմանին մէջ:

Եւ միանգամայն նկատելով որ, թէպէտ Ժողովուրդ իւր Երեսփոխանին հետ քուէ չունի, բայց փոխանորդի իրաւանց անբռնաբարելի ձայնն ունի, որ Աստուծոյ ձայնն է, վասնզի բազմաց ձայն է, և աներկբայ կը հաւատայ թէ Պատկ. Ժողովդ իւր Ժողովրդասէր զգացմամբ՝ որ կենդանացուցիլ ոգին է Ազգային Սահմանադրութեան, մեր ձայնով եկած Աստուծոյ ձայնն որ հեռի է ամէն անձնական նկատումներէ՝ միմիայն Ազգային շահուց նախանձախնդրութեամբ կուգայ խոնարհաբար խնդրել, որ բարեհաճել իւր քուէովն, ինչպէս որ ալ կը հաւատամք, իրենց արժանեօքն ու փորձառութեամբ հանրաժանօթ Կաթողիկոսական ընտրելեաց հետ Ամեն. Խրիմեան Սրբազանի անունն եւս նշանակել, պատկերով իւր արժանիքն և մեր ամենուս փափաք: Եւ այս նշանաւոր պարագայիս մէջ արդեամբք ցուցնել թէ Երեսփոխանական Ազգային Ժողովն արդարեւ Ազգին շահուց ճշմարտապէս նախանձախնդիր կը հանդիսանայ, և համակրական սիրով կը յարգէ Ժողովրդեան օրինաւոր, իրա-

ւացի և արդար պահանջն՝ յաւէտ երախտապարտ կացուցանելով Մեծ Տեառնդ եւ Պատիւ ժողովիդ :

Մնամք ամենայն յարգանքով
(Ստորագրութիւնք 7,500)

1884 Մարտ 30, Կ. Պոլիս

(Յետ ընթերցման)

Տ. Յ. ՔԱՀ. ՄԿՐԵԱՆ — Շնորհակալութիւն Վանեցւոց :

(Բուռն ծափահարութիւնք ունկնդրոց դասէն .)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսելէ յետոյ սոյն հանրագիրն, Տեարք, որով Վանեցի եղբարք պարզապէս բաղձանք կը յայտնեն երեք ընտրելեաց ցանկին մէջ տեսնել եւ Ամեն. Խըրմեան Ս. Հօր տնունն, պիտի ձեռնարկեմք Կաթողիկոսական ընտրութեան քուէարկութեան :

3

Տեղեկագիր Եկեղեցական Համագումար ժողովոյ. — Կարողիկոսական քուէարկութիւն .

Քուէարկութեան ձեռնարկելէ յառաջ Ատենապետ Էֆէնտի կը հրաւիրէ զերեսօխանան յոտին կանգնել, եւ Եկեղեցական դասն ըստ օրինի կերգէ «Էջմիածին ի Հօրէ» չարականն հանգէպ Ս. Տաճարին :

(Խորին լուրբիւն)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախ քան զամենայն, երեսօխան Տեարք, Կաթողիկոսական ընտրութեան մասին Եկեղեցական Համագումար Ս. ժողովոյ տեղեկագիրն պիտի ընթերցուիմք եւ ապա պիտի ձեռնարկեմք քուէարկութեան :

Հետեւարար Ատենապետ Էֆէնտի կընթեռնու Եկեղեցական Համագումար ժողովոյ տեղեկագիրն :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Եկեղեցական Վիճակային Համագումար ժողովոյ .

Եկեղեցական Վիճակային Համագումար ժողովն ըստ հրաւիրանաց Ամենապատիւ Սրբազանութեան Ձերոյ իւր 12 եւ 19 Մարտի գումարմանց մէջ Կաթողիկոսական Եօթն ընտրելի Եպիսկոպոսաց ցանկն քուէարկութեամբ պատրաստած լինելով, կը ժողովայ Դիւանա մատուցանել Բաժն Սրբազանութեան Ձերում իւր սոյս ընտրական գործողութեան արդիւնքն արտայայտող տեղեկագիրն առ ի ներկայել ում եւ անկն է :

Մնամք խորին յարգանքով

Ի դիմաց Եկեղեցական վիճակային ժողովոյ

Ատենապետ Ատենապետ

Գեորգ Վրդ. Գրիգորիս Եպիսկ. Իւրիւնեան Ալեքսանեան

19 Մարտ 1884 Կ. Պոլիս

«Եկեղեցական վիճակային Համագումար ժողովն ըստ հրաւիրանաց Ամեն. Ս. Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ Տեառն Ներսիսի Արքեպիսկոպոսի Վարժապետեան գումարեալ յերկոտաքաներորդում աւուր ամենան Մարտի 1884 ամի, ի Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր-Եկեղեցւոյ, ի կատարել զքուէարկութիւն պատրաստութեան ցանկի Կաթողիկոսական Եօթն ընտրելի Եպիսկոպոսաց :

Ի հարկը վեչտապան Եկեղեցականաց հրաւիրելոց ի սոյն յայտ գումարում Եկեղեցական Վիճակային Համագումար ժողովոյ Սրբազան Պատրիարքին Սրբոյ Երուսաղէմի, որպէս նաեւ Սրբազան Կաթողիկոսին Տաճն Աղթա-

մարայ, անպաշտօն Եպիսկոպոսաց՝ որք ի գաւառս և ի Մայրաքաղաքիս գտանին, երեսուն և չորից վիճակաւոր Առաջնորդաց և Վանահայր, Եօթն և տասն քարոզչաց, երեսուն և հինգ Աւագ և Աթոռակալ քահանայից Ս. Եկեղեցեաց Մայրաքաղաքիս, ընդ ամենայն մասնակցութեամբ իննսուն և վեց քուէարկու անդամոց ժողովոյս՝ կատարեցաւ դրոժողութիւն քուէարկութեան և քուէ-Համարի, յոգում գլացարձակ առաւելութեամբ քուէայց ստացան հետագայ երեք Սրբազան Եպիսկոպոսունք՝ որք են

1. Տ. Ներսէս Ս. Արքեպիսկոպոս Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ 63 քուէ

2. Տ. Մակար Ս. Արքեպիսկոպոս Տեղակալ Հայրապետութեան Ամենայն Հայոց 53 քուէ

3. Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս Մուրատեան Առաջնորդ Չմիւռնիոյ 51 քուէ

«Իսկ յերկրորդում գումարման անդոր յինն և տասաներորդում աւուր ամենան Մարտի այսր ամի՝ Եկեղեցական Վիճակային Համագ. ժողովն յետ ի նկատումն առնելոյ զեղանակ ընտրութեան այլոց չորից ընտրելի Եպիսկոպոսաց՝ ըստ հաւանութեան Ամեն. Ս. Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ, վճռեաց միաձայնութեամբ ընուլ զթիւ Եօթն ընտրելի Եպիսկոպոսաց ի նոցունց անտի և եթ, որք ստացան առաւելագոյն քուէայս յառաջնում քուէարկութեան անդ, որ յերկոտաքան Մարտի յանցելումն երկու-չարթի աւուր, և ըստ այնմ վճռոյ ի թիւ անդր Եօթն ընտրելեաց անցին Եպիսկոպոսունքս այսորիկ .

1. Տ. Մատթէոս Ս. Եպիսկոպոս Իգմիլեան Գարողիչ Նոր Թաղի Իւսկիւտարու 48 քուէ

2. Տ. Եսայի Ս. Արքեպիսկոպոս Պատրիարք Սրբոյ Երուսաղէմայ 39 քուէ

3. Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս Խրիմեան Վանահայր Վարդայ Վանուց 38 քուէ

«Եւ զի Տ. Յարութիւն Ս. Եպիսկոպոսի Վեհապետեան և Տ. Խորէն Եպիսկոպոսի Ալքրեան քուէայք թուով էին հաւասար, հարկ եղաւ վիճակ արկանել և ընտրել զմի ի սոցանէ յերկոցունց, և ել վիճակն Տ. Խորէն Ս. Եպիսկոպոսի Ալքրեան, և էանց սա ի թիւ Եօթանց ընտրելի Եպիսկոպոսաց, և որոյ ընկալեալ էր արդէն յառաջնում քուէարկութեան կատարելոյ յերկոտաքան Մարտի քուէայս երեսուն և հինգ :

«Արդ՝ ըստ այսմ՝ Եկեղեցական Վիճակային Համագ. ժողովն լրացուցեալ զԵօթնեակ թիւ ընտրելոց՝ առաջի առնէ Ամեն. Ս. Պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ՝ Բարձրաշնորհ Նախագահի ժողովոյս մատուցանել ում և անկ է :

Ի 19 Մարտի 1884 ամի
Ի Մայր Եկեղեցւոյ

(Ստորագրութիւնք)

1. Եսայի Արք-Եպիսկ. Կ. Ուղունեան (Ս. Աթոռոյս Երուսաղէմի Պատրիարք)

2. Դրիգորիս Եպիսկ. Ալեքսանեան

3. Տիմոթէոս Եպիսկ. Սափրիչեան

4. Մատթէոս Եպիսկ. Իգմիլլեան (Փոխանորդ Կաթողիկոսութեան Աղթամարայ և Գարողիչ Իւսկիւտարու)

5. Եղիշիկ Եպիսկ. Ապահոնի (Առջն. Արաբկիրու)

6. Խորէն Եպիսկ. Ալքրեան (2. Վանուցն Արմաշու)

7. Մեծորդ Արք-Եպիսկ. Մուրաթեան
8. Խորէն Արք-Եպիսկ. Նար Պէյ
9. Բարթոլոմէոս Եպիսկ. Զամչեան
(Առաջնորդ Պրուսայի)
10. Սիմէոն Եպիսկ. Սէֆէրեան
11. Մելքիսեդեկ Եպիսկ. Մուրաթեան
(Առաջնորդ Զմիւռնիոյ)
12. Արիստակէս Եպիսկ. Դերձակեան
(Առաջնորդ Աղբրանուպոլսոյ)

Վարդապետ

13. Մաղաքիա Վարդ. Օրմանեան
14. Գարեգին » Թաթարեան
15. Յովսէփ » Այվազեան
16. Դրիգոր » Արարդեան
17. Պողոս » Խօլոսամեան
18. Յովհաննէս » Ալշարունի
19. Տաճատ » Ոսկանեան
20. Կարապետ » Բաղրատունի
21. Յակոբ » Ա. Փափաղեան
22. Վահան » Տ. Մինասեան
23. Գէորգ » Իւթիւճեան
24. Յովսէփ » Սարաճեան
25. Դրիգորիս » Բարսէղեան
26. Սահակ » Մարտիրոսեան

Քանաւայ

27. Յովհաննէս Բէյ. Մկրեան
28. Սահակ » Տ. Սարգսեան
29. Յովհաննէս » Հիւնքեարպէյ
30. Իգնատիոս » Մանավեան
31. Միքայէլ » Վարժապետ
32. Մարուգէ » Ռաֆայէլեան
33. Խորէն » Փէհլիվանեան
34. Գրիգոր » Աճէմեան
35. Արիստակէս » Մամբրէեան
36. Մատթէոս » Պարտիզպան
37. Մինաս »

38. Աթանաղինէ »
39. Կարապետ » Սէթեան
40. Պետրոս » Փափաղեան
41. Յովհաննէս » Արսէնեան
42. Վրթանէս » Պալեան
43. Նիկողոս » Թէվէրէլեան

(Յետ բնիւրացման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ՝ պիտի ձեռնարկուի քուէարկութեան : Ուստի նախ հարկ է վիճակաւ կարգել քննիչներն եւ ապա ձեռնարկել քուէհամարի դործողութեանց :

Զայս ասելով Ատենապետ Էֆէնտի քուէթըղթերն բաշխել կուտայ իւրաքանչիւր Երեսփոխանի եւ քուէհամարի քննիչ կը կարգէ վիճակաւ :

1. Տ. Յովհաննէս քէնյ. Մկրեան
2. Տ. Խորէն քահ. Փէհլիվանեան
3. Գաբրիէլ էֆ. Նորատունեան
4. Ղազար » Հովսէփեան
5. Յովհաննէս » Արշակունի

Անուանական քուէարկութիւն կատարուելով արդիւնքն կը յայտնէ թէ՛ (1) 100 քուէարկուաց քուէներէն ստացեր են՝

1. Տ. Ներսէս Արք-Եպիսկոպոս Վարժապետեան, Պաթրիարք Կ. Պօլսոյ 62 քուէ

(1) Ներկայ Երեսփոխանաց թիւն էր 101 : սակայն Փանոսեան Կարապետ էֆէնտի քուէարկութեան մէջ ձեռնպահ մնաց եւ Փափաղեան Ստեփան էֆէնտի քուէարկութեան պահուն մեկնած էր : — Փոխանակ Երուսաղիմայ Պատրիարքին եւ Աղթամարայ Կաթողիկոսին՝ իրենց Փոխանորդներն Տ. Սիմէոն եւ Տ. Մատթէոս Եպիսկոպոսներ քուէարկեցին եւ քուէից թիւն մնաց 101, յորոց մին սպիտակ լինելով, քուէարկուաց ճիշդ թիւն 100 եղաւ :

2. Տ. Մկրտիչ Արք-Եպիսկ. Խրիսեան, Նախկին Պատրիարք Կոստանդնուպօլսոյ 50 »
3. Տ. Մելքիսեդեկ Արք-Եպիսկ. Մուրաթեան, Առաջնորդ Զմիւռնիոյ. 42 »
4. Տ. Խորէն Եպիսկ. Աշըքեան, Վանահայր Արմաշու. 18 »
5. Տ. Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան, Բարողիչ Իւսկիւտար Ս. Կարապետ Եկեղեցւոյ 16 »
6. Տ. Մակար Արք-Եպիսկ. Մամիկոնեան Կաթ. Տեղակալ 15 »
7. Տ. Եսայի Արք-Եպիսկ. Ուղունեան Պատրիարք Ս. Երուսաղիմայ 9 »

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քուէարկութեան արդիւնքն կը յայտնէ, Տեարք, թէ՛ 100 քուէարկուաց քուէներէն ստացեր են՝

- 1 Տ. Ներսէս Արք-Եպիսկ. Վարժապետեան 62 քուէ. եւ 2. Տ. Մկրտիչ Արք-Եպիսկ. Խըրիմեան 50 քուէ. 3. Տ. Մելքիսեդեկ Արք-Եպիսկ. Մուրաթեան 42 քուէ :

Իսկ միւս քուէներն 18էն մինչեւ 9 տարածեալ են չորս Ս. Եպիսկոպոսաց վրայ որք են՝

- Տ. Խորէն Արք-Եպիսկ. Աշըքեան 18 քուէ
- Տ. Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան 16 »
- Տ. Մակար Արք-Եպիսկ. Մամիկոնեան 15 »
- Տ. Եսայի Արք-Եպիսկ. Ուղունեան 9 »

(Ատենապետ Էֆէնտիի սոյն յայտարարութեան վրայ Երեսփոխանութիւն եւ Ժողովուրդ՝ «կեցցէ՛ Սուլթան Համիտ, կեցցէ՛ Ներսէս, կեցցէ՛ Խըրիմեան, կեցցէ՛ Մելքիսեդեկ» աղաղակելով իրենց զգացած գոհունակութիւնն կ'արտայայտէին :)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Բարեկարգութիւնը վերահաստատելով) Սոյն ընտրութեան արդիւնքն, Տեարք, տարակոյս չիկայ թէ՛ Դիւանիս կողմանէ մասնաւոր տեղեկագրով մը

պիտի հաղորդուի առ Ամեն Ս. Պատրիարք Հայրն, որ պէտքի ըստ ընկալեալ բանաձեւի զարժանն ի դործ դնէ

ԶԱՅՆԵՐ. — Շատ լա՛ւ, շատ լա՛ւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Դիւանս մասնաւոր ընտրակալութիւն կը յայտնէ թէ՛ առ Երեսփոխանսն եւ մանաւանդ առ Ժողովուրդն, որ այս կենսական պարագայիս մէջ Սահմանադրական Ժողովրդեան մը վայել ընթացքի մը մէջ գտնուեցաւ :

ԶԱՅՆԵՐ. — Մե՛ք ալ ընտրակալ եմք Դիւանիդ անկողմնակալ ընթացքէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զեր Դիւանն իւր պարտքն եւ եթ կատարեց :

Յառաջիկայ նիստն Տեարք, որ 1883 նոտաշրջանի վերջինն պիտի լինի, բնականաբար Ս. Զատիկի տօնական օրերէն վերջն տեղի պիտի ունենայ :

Ատենան կը վերնայ ժամը 11 ին :

Ատենադպիր	Ատենապետ
Յ. ԳՈՒՐԳԵՆ	Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

2 11. 1884

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԱԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրե.
2 Կրպեւ. Վ. Բաղրատունի Բ
3 Վահանի. Տ. Մինասեան
4 Կրպեւ. Քչ. Սեթեան Բ

Բ. ՎԻՃԱԿ

- 5 Մատթէոս Ե. Իգմիրլե.
6 Յովհաննէս Բ. Մկրեան
7 Գրիգոր Բ. Աճեմեան
8

Գ. Վիճակ

- 9 Գրիգոր Ե. Տ. Պօղոսե. Բ 4
10 Յակոբ Վ. Փափազեան
11 Խորէն Բ. Փէշկիվանե. Բ
12 Ոսկի Բ. Օհանեան Բ

Գ. Վիճսկ

- 43 Եղիշէ վ. Այլաղեան Բ
44 Յովհ. վ. Արշարունի
45
46

Ե . Վ ի ճ ա կ

- 17 ՅովսէփՎ. Այլազեան
18 ԳարեգինՎ. Թաթարե. Բ 2
19 ՍուքիասՖ. Ստեփաննե.
20 ԳաբրիէԼԻ. Պանճեան Բ 2

- Բ Բացակայութիւն առաջին
2 » երկրորդ
9 » բանաւոր պատճառաւ

ԱՇԽԱՏԱԿԱՆՔ

Ե. Վիճակ

- Գում-Գաբու, Կետիկ փաշա
էս Գում-Գաբուի դուրս
- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ 2
22 Կարապետ Աղարամ.
23 Բարթող Բիւրքճիպ. Բ
24 Գէորգ Աստուլահե.
25 Յ. Մէրէէմ-Գուլի Բ Պ
26 Տիգրան Հիւնքեարպ.
27 Աւետիս Սուրէնեան Բ 3
28 Տօք. Յ. Թիրեաքեան
29 » Այվաղեան Բ
30 Գէորգ Այվաղեան Բ Պ
31 Յակոբ Եէմէնիճեան Բ
32 Յակոբ Գուրգէն
33
34
35
36
37

Բ. Վրճանկ

Պէշկապաշ

- 38 Բարսեղ Հալաճեան
39 Յովէ. Քէրէստէճեան
40 Մեղքոն Պարոնիկեան Բ
ԵՄԵՆԻ-ԳԱՐՈՒ
41 Լեւոն Բարամաճեան Բ Պ
42 Մարուգէ Ֆրէշկեան Բ 3
43 Պօղոս Էնքսէրճեան
44

ԱԿԻՆՍԱՐ Ս .

- 45 Սիմէօն Ֆելէկեան Բ 4
46 Գաբրիէլ Նորատուհնկ.

- 47 Գասպար Գասպարե . Բ 5
48
Իւսկիւտար Ս . Կարապետ
49 Միհրան Պահէգար . Բ 7
50 Պօղոս Թորգոմեան Բ
51 Տրդատ Փափազեան Բ
52 Յակոբ Հաճեան Բ 3
Գ . Վիմակ
Գաղսմ-Բաշա
53 Գասպար Զերազ Բ 8
Բերա
54 Գրիգոր Սէլիմյէճե . Բ 3
55 Ղազար Հովութեան Բ
56 Յարութիւն Պէկեան
57 Նշան Պօյաճեան Բ 3
58 Վիլէն Օրմանեան
59 Սինեքերիմ Մանուկե . Բ 2
60 Համբարձում Մազար . Բ 3
61 Մանուկ Ասլանեան Բ 3
62
Միջագիւղ
63 Տիգրան Եռստօֆեան
64 Մկրտիչ Գազանճեան Բ 3
65 Մկրտիչ Զանրմեան Բ 7
66 Պօղոս Շիլմանեան Բ
67
Պէյգօզ եւ Ղալաթիա
68 Միքայէլ Մամիկոնե . Բ
Գ . Վիմակ
Քուզկունձուզ եւ Իմատիյե
69 Մկրտիչ Մէլգյուրեան
70 Սիմօն Մազսուտեան Բ

Գատրգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան Բ Պ	Կարին	121 Ստեփան Փափազեան
72 Կարապետ Հաղարեան Բ Պ	101 Սերովբէ Աղնաւորե. Բ 3	Տիվրիկ
Նարլը-Գաբու	Քեօթանեա	122 Նշան Գարաշաշ
73	102 Աւետիս Թընկերեան	Զէյրուն Է. Մարաշ
Եհնի-Մանայիկ Սամաթիոյ	Աղրիանուպոլիս	123
74	103	Տրապիզոն
Թօբ-Գաբու	Նիկոմիդիա	124 Յարութիւն Զէրքէզե.
75	104 Կարապետ Ս. Իւթիւն. Բ	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	Ակն	125
Աստուածածին	105 Յակոբ Գորեան Բ. 2	Տիգրանակերտ
76	Ղարահիսար	126 Միհրան Զօպանեան
Գուրու-Զեղմե	106 Կարապետ Երէցեան Բ	Վան
77 Կարապետ Սըվաճեան	Արաբկիր	127 Մարկոս Աղարէգեց. Բ. 4
Հիսար Է. Պօյաճի-Գիւղ	107 Կարապետ Խաչիկե. Բ Պ	Աղրամար
78	Բաղէշ	128
Նոր-Գիւղ Է. Սթեփիա	108	Հալեպ Է. Այնթապ
79	Պրուսա	129
Պալատ	109 Քրիստոստուր Դազարոս.	Սեբաստիա
80 Տիգրան Բարաղամեան	Եղոնկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Մկրտիչ Կիւմիւշեան Բ	110 Գէորգ Արսլանեան Բ 3	Ռուսնուգ
82 Ռէթէոս Թաղէոսեան	Ամասիա	131
Քարակեօմրիւկ	111 Համբարձ. Աւանաճ. Բ	Բաբերդ
83 Յովհաննէս Թորոսեան Բ	Բայու	132
84 Կարապետ Փանոսեան Բ	112 Յովհ. Աղնաւորեան Բ 2	Զմշկաձագ
Ե. Վիճակ	Եղեսիա	133
Սամաթիա	113 Յակոբ Իւթիւնեան	Փաղատիա
85 Յակոբ Արշակ	Մահմըլլիս	134
86 Մարգիս Աղարէքե. Բ 4	114	Ատանա
87 Յովհաննէս Նուրեան	Հաճըն	135 Մինաս Զերաշ
88 Տէգրան Աճէմեան Բ 3	115	Սդերդ
89 Ռուբէն Կիւմիւշկէր.	Երզնկա	136 Մաթէոս Ալէքսանե.
90	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ 2	Եօզլատ
91	Թեքիրտաղ	137
92	117 Տիգրան Գ. Սինանե. Բ 2	Մալաթիա
93	Կեսարիա	138 Գէորգ Վարդանեան Բ
94	118	Իզմիր
Խասգիւղ	Խարբերդ	139
95 Յովհաննէս Արշակունի	119	Եգիպտոս
96 Ռուբէն Պուլիուրեան	Պալքեսեր	140 Աբրահամ Մուրաւեան
97 Մարգար Գուլաքսըզ Բ 4	120 Ստեփան Գօլօլեան Բ	
98 Յակոբ Խանտանե. Բ 8		
99 Նիկողոս Թիւլպէնա.		
100		

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ



ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Դիտողութիւնք Ղաղարոսեան Ք. Էֆ.ի վասն Ատենապետութեան
իւրոյ .

ՕՐ Ա Կ Ա Ր Դ

Խնդիր Կաթողիկոսական ընտրութեան (քուէարկութիւն .)

1. — Բանաձեւ առաջարկեալ ի Կաթողիկոսական Յանձնաժողովէ առ Աղգ. Ժողովն յաղագս Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան .
2. — Հանրագիր վանեցի Աղգայնոց վասն Կաթողիկոսական ընտրելիութեան Ամեն . Տ . Մկրտիչ Արք-եպիսկոպոսի Խրիմեան .
3. — Տեղեկագիր Եկեղեցական Համագումար Ժողովոյ .— ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ .